



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«**ԲՆԱԴԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ**»



**Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

«19» 04 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ 36**

**Ձեռնարկողը՝**

**«*ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնս*» ՍՊԸ**

*Ք. Երևան, Վ. Մարզայան 26/3*

**Գործունեությունը՝**

**«*Հայստանի էլեկտրական ցանցեր*» ՓԲԸ-ի «*Բաղրամյան*» էլ. ցանցի վարչական տարածքում վրանգավոր թափոնների պահման տեղամասերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռություն**

*«Արմավիրի մարզ»*

«*Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն*» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



*Սահակյան*

**Վ. Սահակյան**

թիվ ԲՓ 36

« 19 » 04 2018թ.

**<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի <<Բաղրամյան>> էլ. ցանցի վարչական տարածքում վտանգավոր թափոնների պահման տեղամասերի կառուցման գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	«Էյ Թի Էս Էս Սոլյուշնս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արմավիրի մարզ, Մյասնիկյան համայնք

Նախատեսվող գործունեությունը գտնվում է Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական սահմաններում:

Վտանգավոր թափոնների պահման տեղամասերը (տարածքները) տեղակայված են լինելու "Բաղրամյան" էլ. ցանցի վարչական տարածքում, նոր հողատարածքներ չեն պահանջվելու: Թափոնների պահման համար կառուցվող նոր պահեստ-ծածկարանի ընդհանուր մակերեսը կազմում է 1200 մ<sup>2</sup>:

Թափոնների պահման տեղամասերի (տարածքների) կառուցման համար նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝ գոյություն ունեցող շենքերի վերանորոգում, նոր պահեստ-ծածկարանի կառուցում:

Նախագծով նախատեսվում են նաև թափոնների պահման տեղամասերի հողանցում, շանթապաշտպանություն, հակահրդեհային և ջրահեռացման համակարգեր:

Թափոնների պահման համար նախատեսվում են հատուկ տարածքներ ըստ պահվող նյութերի և սարքավորումների նշանակության, որոնք համապատասխանում են սանիտարահամաճարաքային, հիգիենիկ, աշխատանքի պաշտպանության և հրդեհային անվտանգության պահանջներին: Տարածքները դասավորված են այնպես, որ ապահովում են բեռնափոխադրող մեքենաների անարգելք մոտեցումը:

Գոյություն ունեցող և նոր կառուցվող վտանգավոր թափոնների պահման տեղամասերում ընդհանուր առմամբ պահվելու են 10 տեսակի թափոններ, որոնց պահման ժամանակահատվածը "Բաղրամյան" էլ. ցանցի տարածքում 10 տարի է:

Ընկերությունում առաջացող թափոնների ցանկը, ծածկագրերը, վտանգավորության դասը, քանակությունները և պահման համար անհրաժեշտ մակերեսները՝



№	Թափոնի անվանումը, ծածկագիրը և վտանգավորության դասը	Թափոնի գոյացման քանակը, տ/տարի	Թափոնի պահման նվազագույն մակերեսը, մ <sup>2</sup>
1	Բանեցված սնդիկային լամպեր (35330100 13 01 1), I դաս	0.3	25
2	Ապակե և կերամիկական մեկուսիչներ (վտանգավորության դաս սահմանված չէ)	200 հատ	15
3	Բանեցված կապարե կուտակիչներ (92110100 13 01 2), II դաս	6 (3-4 տարին մեկ)	25
4	Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (54100207 02 03 3), III դաս	5.0	150
5	Յուղոտված լաթեր (54100207 02 03 3), III դաս	1.0	10
6	Նավթամթերքներով, քիմիական նյութերով, կենսանյութերով աղտոտված բնահողեր, որոնք ենթակա են հավաքման, վերամշակման և հեռացման (31402411 04 03 3), III դաս	2.0	150
7	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում՝ թուջի և/կամ պողպատի փոշի) (35131100 01 00 4), IV դաս	3.5-4.0	70
8	Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (35310305 01 01 3), III դաս	1.0-1.5	50

Գոյություն ունեցող շինություններում՝ վարչական շենքին կից պահեստային տարածքներում և ծածկարանում իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ: Այստեղ կազմակերպվելու են թիվ 1, 3, 5, 7 և 8 տեղամասերը: Կառուցման ենթակա նոր պահեստ ծածկարանում կազմակերպվելու են թիվ 2, 4, 6, 9 և 10 տեղամասերը:

Տեղամասերի/տարածքների ընդհանուր թիվը 10-ն է: Դրանցում պահման ենթակա թափոնները, ինչպես նաև յուրաքանչյուր թափոնատեսակի պահմանը ներկայացվող պահանջները նկարագրված են ստորև:

Թիվ 1 տեղամասը նախատեսված է բանեցված սնդիկային լամպերի պահման համար: Տարածքի հատակը՝ սնդիկի ազդեցության նկատմամբ կայունությունն ապահովելու նպատակով, պետք է լինի սուպեր-պլաստիֆիկատորով (MasterRheobuild 1000) լավարկված բետոնից (B15 մակնիշի) պատված՝ կերամիկական սալիկներով: Հնարավոր վթարներին արագ արձագանքելու համար տեղամասը պետք է կահավորված լինի սնդիկահավաք հատուկ հանդերձանքով ըստ TY 9452-003-29496058-2001 (պարունակում է մակերևութային ակտիվ նյութ, կոմպլեկսաձևավորիչ, անձնակազմի պաշտպանության և սնդիկի հավաքման հարմարանքներ՝ շնչադիմակներ, ձեռնոցներ, քարիներ, սերարկիչներ, պղնձե վրձին, մազիկավոր վրձին, խոնավ անձեռոցիկներ, տեխուր, գոգաթիակ): Շահագործումից դուրս եկած սնդիկային լամպերը պետք է պահվեն համապատասխան նշագրմամբ հերմետիկ տարաներում համաձայն ԳՕՍՏ 4658-73:



Թիվ 2 տեղամասը նախատեսված է ապակե և կերամիկական մեկուսիչների պահման համար: Տարածքի հիմքի և պատերի մշակման համար հատուկ պայմաններ չեն պահանջվում: Մեկուսիչները պահվելու են հատուկ տարաներում կամ լցակույտերով:

Թիվ 3 տեղամասը նախատեսված է բանեցված կապարե կուտակիչների պահման համար: Հատակը և պատերը պետք է պատված լինեն թթվակայուն ծածկույթով: Հատակը և պատերը իրականացվելու են լավարկված բետոնից (B15 մակնիշի), որին որպես հավելանյութ ավելացվելու է հեղուկ ապակի՝ թթվակայուն ծածկույթի ապահովման նպատակով: Տեղամասը հարկավոր է հաճախակի օդափոխել և զերծ պահել քիմիական ազդեցություններից: Բանեցված կապարե կուտակիչները պետք է պահվեն իրենց համար նախատեսված հերմետիկ տարաներում, որոնք էլեկտրոլիտի նկարմամբ դիմացկուն են և բացառում են դրա արտահոսքը: Տեղամասը պետք է հագեցած լինի անձնակազմի պաշտպանության միջոցներով (թթվակայուն նյութով ներծծված հատուկ հանդերձանք, կիսաճտքավոր ռետինե կոշիկներ, ռետինե ձեռնոցներ, ռետինե գոգնոց, պաշտպանիչ ակնոցներ):

Թիվ 4 և 6 տեղամասերը նախատեսված են համապատասխանաբար բանեցված յուղերի և տրանսֆորմատորային յուղով աղտոտված հողի (խճի) ու լաթերի պահման համար: Տարածքների հատակները պատվելու են յուղակայուն ծածկույթով (էմալ ՄС-160 ըստ ТУ У В.2.7-05761614.028-2000): Հատակը և պատերը լինելու են B20 մակնիշի լավարկված բետոնից: Տեղամասերը պետք է կահավորված լինեն հրդեհաշիջման ու անհատական պաշտպանության միջոցներով (կիսաճտքավոր ռետինե կոշիկներ, ռետինե ձեռնոցներ, ռետինե գոգնոց, պաշտպանիչ ակնոցներ), ինչպես նաև յուղի արտահոսքը լրկալիզացնելու ու հավաքելու հանդերձանքով: Վերջինիս ապահովման նպատակով, տեղամասերում լինելու են յուղերի հավաքման համար նախատեսված հավաքածուներ, օրինակ SK-1100 կամ "Spill-Sorb" տեսակի բնական արդյունաբերական արտորբենտից: Բանեցված յուղը՝ 200 լ տարողություններով պահվելու է յուղահավաք տակդիրների վրա, որոնց տարողունակությունը կազմելու է յուղի պահման տարողության ծավալի 110%-ը: Տրանսֆորմատորային յուղով աղտոտված հողը (խիճը) և լաթերը պահվելու են առանձին՝ յուղակայուն ներկով պատված մետաղական տարողություններում (ռեզերվուարներում)՝ դրված յուղահավաք տակդիրների վրա:

Թիվ 5 տեղամասը նախատեսված է յուղոտված սարքավորումների պահման համար, որտեղ հատակը և պատերը կառուցվելու են B15 մակնիշի լավարկված բետոնից և մշակվելու են յուղակայուն ծածկույթով (էմալ ՄС-160 ըստ ТУ У В.2.7-05761614.028-2000): Տեղամասը կահավորվելու է հրդեհաշիջման ու անհատական պաշտպանության միջոցներով (կիսաճտքավոր ռետինե կոշիկներ, ռետինե ձեռնոցներ, ռետինե գոգնոց, պաշտպանիչ ակնոցներ), ինչպես նաև յուղի արտահոսքը լրկալիզացնելու ու հավաքելու հանդերձանքով: Քանի որ, տեղամասը նախատեսված է յուղոտված սարքավորումների պահման համար, նախատեսվում է տեղամասում ունենալ յուղերի հավաքման համար նախատեսված հավաքածու:

Թիվ 7 և 8 տեղամասերը նախատեսված են համապատասխանաբար սև և գունավոր մետաղաջարդոնի պահման համար: Տարածքի հիմքի և պատերի մշակման համար հատուկ պայմաններ չեն պահանջվում: Մետաղաջարդոնը պահվելու է դասավորված կամ լցակույտերով:

Թիվ 9 տեղամասը նախատեսված է բանեցված տրանսֆորմատորների պահման համար: Տեղամասի հատակը և պատերը իրականացվելու են B20 մակնիշի լավարկված բետոնից և մշակվելու են յուղակայուն ծածկույթով (էմալ ՄС-160 ըստ ТУ У В.2.7-05761614.028-2000): Բանեցված տրանսֆորմատորները պահվելու են յուղահավաք տակդիրների վրա, որոնց տարողունակությունը կազմելու է տրանսֆորմատորներում պարունակվող յուղի ծավալի 110%-ը:



Թիվ 10 տեղամասը նախատեսված է ասբեստ պարունակող նյութեր պահելու համար: Տարածքի հիմքի և պատերի մշակման համար հատուկ պայմաններ չեն պահանջվում: Շահագործումից դուրս եկած ասբեստ պարունակող նյութերը պահվելու են հերմետիկ փակված պոլիէթիլենային պարկերում կամ փակ տարաներում՝ ասբեստ պարունակող թափոնների կառավարման ուղեցույցի համաձայն:

"ՀԷՑ" ՓԲԸ մասնաճյուղերից թափոնների փոխադրումը մինչև վտանգավոր թափոնների տեղադրման տեղամասեր նախատեսվում է իրականացնել ընկերության տրանսպորտային միջոցներով: Աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի ավարտից հետո, դրական փորձաքննական եզրակացություն ստանալու դեպքում, ձեռնարկողը, վտանգավոր թափոնների պահման տեղամասերի, ինչպես նաև դրանց փոխադրման գործունեությունների համար, նախատեսում է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ համապատասխան լիցենզիա ստանալու նպատակով:

Նախատեսված է գոյություն ունեցող շենքերի վերանորոգում: Վարչական շենքի պահեստային տարածքների (թիվ 1, 3, 5 տեղամասեր) տեղազննությամբ պարզվել է, որ բացակայում են լուսամուտները, հատակները կիսաքանդ են, պողպատե գլոցվածքից դարպասները կարիք ունեն վերանորոգման:

Հատակները քանդել, փոխարենը կառուցել բետոնե ամրանավորված հատակներ: Պատերը սվաղել ցեմենտավազային շաղախով: Տեղադրել "Եվրո" տիպի սպիտակ գույնի, երկտակ ապակեփաթեթով բացվող լուսամուտներ: Դարպասներն ապամոնտաժել, նորոգել նոր նյութերով, ներկել և մոնտաժել:

Գոյություն ունեցող ծածկարանի պահեստային տարածքի (թիվ 7 և 8 տեղամասեր) տեղազննությամբ պարզվել է, որ բացակայում են դարպասները, տանիքի ազրոշիֆերե ծածկույթը տեղ-տեղ բացակայում է:


Քանի որ ծածկարանի տարածքը ընդարձակ է, տարածքը բաժանվելու է երկու մասի քարե պատի միջոցով: Պատերը սվաղել ցեմենտավազային շաղախով: Տեղադրել նոր դարպասներ պողպատե գլոցվածքից: Տանիքի ազրոշիֆերե անպիտան ծածկույթը և կավարամածը քանդել, իրականացնել նոր ծածկույթ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից՝ փայտե կավարամածի վրա:

Շենքի պողպատե տարրերը նախաներկել մեկ շերտ ԴՓ-20 և երկու շերտ ՈՓ-133 էմալով:

Պահեստ-ծածկարանը կառուցվելու է մենակաղական ֆերմաներով, պատերը մետաղական ցանցերից:

Գոյություն ունեցող շենքերի և նոր կառուցվող պահեստ-ծածկարանի շանթապաշտպանությունն իրականացվում է շենքերի մետաղական տանիքները հողանցման համակարգին միացմամբ: Գոյություն ունեցող շենքերի երեք կողմերում կառուցվում է հողանցման եզրագիծ՝ շենքի հիմքից 1 մ հեռավորության վրա, բնահողում 0.5 մ խորությամբ տեղադրվում է 40x4 մմ շերտապողպատ, որին 4-ական իջեցումներով միացվում են գոյություն ունեցող շենքերի մետաղական տանիքները:

Նոր կառուցվող պահեստ-ծածկարանի շուրջ նույնպես կառուցվում է հողանցման եզրագիծ և ծածկարանի մետաղական կոնստրուկցիան 5 տեղում միացվում է այդ եզրագծին: Իջեցումներն իրականացվում են Ø8 մմ հոսանքատար ձողերի միջոցով: Վերջիններս հողանցման եզրագծին ամրանում են գետնից 1մ բարձրության վրա տեղադրվող ձողաշերտապողպատ միացուցչի միջոցով: Հոսանքատար ձողերը շենքերի արտաքին պատերին ամրացվում են ճակատային բռնիչի միջոցով, իսկ հողանցման շերտապողպատը՝ բյուրեղամեխերով: Նոր կառուցվող պահեստ-ծածկարանի մետաղական կոնստրուկցիաներին հողանցման շերտապողպատը ամրացվում է եռակցմամբ: Շենքերի հողանցման եզրագծերը երկուական տեղում միացվում են տարածքին կից գտնվող 110/10կվ "Բաղրամյան" ենթակայանում գոյություն ունեցող հողանցման եզրագծին:



Տարածքին կից նախատեսվում է տեղադրել ե/բ պահուստային ռեզերվուար 27տ տարողությամբ: Հրդեհի դեպքում պոմպի օգնությամբ՝ որը տեղադրված է հորում, ջուրը մղվում է դեպի հակահրդեհային փականները: Մուտքագիծը նախատեսվում է իրականացնել DN50-DN65 պողպատե խողովակներով, որի վրա նախագծված են 2 հատ հակահրդեհային փականները: Հակահրդեհային փականների արկղերը նախատեսված են մետաղից 540/650/230 չափերի:

Բանեցված յուղերի, տրանսֆորմատորային յուղերով աղտոտված հողի և բանեցված տրանսֆորմատորների սենքերից արտահոսված յուղերը բետոնե վաքերի միջոցով հեռացվում են դեպի ավազորսիչ, այնտեղից էլ դեպի յուղավառելիքաորսիչ: Յուղերից տարանջատված կեղտաջուրը հեռացվում է տարին 2 անգամ՝ կեղտաջրերի հեռացման համար նախատեսված հատուկ մեքենայով:

"Բաղրամյան" էլ. ցանցում թափոնների պահման տեղամասերի վերանորոգման և կառուցման աշխատանքների ընթացքում կառաջանան՝ 80տ շինարարական աղբ և 558մ<sup>3</sup> ծավալի գրունտ, որը առաջանալու է նոր պահեստ-ծածկարանի կառուցման աշխատանքների ժամանակ: Առաջացած 558մ<sup>3</sup> ծավալի գրունտը ամբողջությամբ օգտագործվելու է ճանապարհի բարեկարգման համար: Հողային աշխատանքների ժամանակ կառաջանա նաև 293մ<sup>3</sup> բուսահող, որից 205.1մ<sup>3</sup> բուսահողը օգտագործվելու է տարածքի բարեկարգման և ռեկուլտիվացման համար, իսկ մնացած մասը՝ 87.9մ<sup>3</sup>, հանձնվելու է Մյասնիկյան համայնքին:

"Բաղրամյան" էլ. ցանցում հակահրդեհային համակարգի և ջրահեռացման միջոցառումների արտաքին և ներքին ցանցերի իրականացման աշխատանքների ընթացքում փորվելու են 120մ<sup>3</sup>, 25մ<sup>3</sup>, 35.5մ<sup>3</sup> ծավալի խրամուղիներ: Արդյունքում առաջանալու է 180.5մ<sup>3</sup> ծավալի գրունտ, որից 36մ<sup>3</sup>-ը բուսահող է: Առաջացած 144.5մ<sup>3</sup> ծավալի գրունտը օգտագործվելու է խրամուղիներ ետլցման և ճանապարհի հարթեցման համար, իսկ 36մ<sup>3</sup> բուսահողը օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման համար:

Երկու փուլերում էլ բուսահողը պահվելու է առանձին՝ հողաթմբերով: Ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու նպատակով հողաթմբերը ծածկվելու են անջրաթափանց բրեզնտե ծածկույթով:

Առկա է Արմավիրի մարզի, Մյասնիկյան համայնքի ղեկավարի 05.09.2017թ.-ի թիվ 59-Ա գրությամբ տրամադրված նախագծման թույլտվության, ինչպես նաև ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում),
- հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական աշխատանքների, շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Աշխատանքների իրականացման ժամանակ շինարարական հրապարակը պարբերաբար (օրական մեկ անգամ) ենթարկվելու է ջրցանի: Ջրցանը իրականացվելու է շաղախի պատրաստման, խրամուղիների փորման, ճանապարհի բարեկարգման, ինչպես նաև գրունտը ինքնաթափ մեքենա բարձելու ժամանակ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ջրցանի ջուրը մատակարարվելու է ՀԷՑ-ի Բաղրամյան էլ. ցանցի տարածքից: Աշխատողների

անիտարահիգիենիկ կարիքները հոգալու համար նախատեսվող գործունեության տարածքի մոտակայքում կապալառուն վարձելու է սեփական տուն, որը կահավորված կլինի լոգարանով, զուգարանով և սննդի ընդունման սենյակով: Շինարարական հարթակների ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու և կոմունալ տնտեսական ջրօգտագործման արդյունքում: Կորուստը կազմում է 1.5%, այստեղից կեղտաջրերը կազմում են՝ 32մ<sup>3</sup> կառուցման ժամանակահատված:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա աշխատանքների իրականացման ընթացքում՝ շինարարական աղբն է (ծածկագիր 9120060001000)՝ մոտ 80տ քանակությամբ, որի հիմնական մասը՝ 74.8տ -ն կազմում են բետոնե իրերը (ծածկագիր 3990120001004), որոնք աշխատանքների իրականացման ընթացքում կտեղափոխմեն համայնքային աղբավայր:

Շինարարության ընթացքում կիրառվող նյութերը մատակարարվելու են Արմավիր քաղաքից, անմիջապես օգտագործումից առաջ: Նախատեսվող գործունեության տարածքում բոլոր հեղուկ նյութերը պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերից խուսափելու համար: Փոշի առաջացնող նյութերը մինչ օգտագործումը, ինչպես նաև անբարենպաստ մթնոլորտային պայմանների դեպքում ծածկվելու են բրեզենտով կամ ՊՎՔ թաղանթով:

Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքների իրականացման համար հարկավոր է իրականացնել ՓՈՒԼ I-ում՝ 851մ<sup>3</sup>, իսկ ՓՈՒԼ II-ում՝ 180.5մ<sup>3</sup> ծավալով փորման աշխատանքներ:

Բուսահողի հանումը, պահումը և հետագա օգտագործումը իրականացվելու է ապահովելով ՀՀ կառավարության 20.07.2006թ.-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1026-Ն որոշման պահանջները:

Համաձայն արտանետվող վտանգավոր նյութերի քանակների հաշվարկի, վնասակար նյութերի քանակները սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում են:

### **Եզրահանգում**

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների վերաբերյալ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է **« օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ՝ մասնավորապես անհրաժեշտ է ստանալ համապատասխան լիցենզիաներ: Համաձայն «Լիցենզավորման մասին» « օրենքի «Վտանգավոր**



թափոնների վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում>>-ը ենթակա են լիցենզավորման:

2. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետնախազձային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինարարի (կենցաղային արքի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի <<Բաղրամյան>> էլ. ցանցի վարչական տարածքում վտանգավոր թափոնների պահման տեղամասերի կառուցման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Ձ. Զուլոնաչյան